

հակառակ պարագային՝ մահուան պատիժը պիտի գործադրուի Զեքի վանութեան եւ Օրմանեան Սրբազանին դէմ։

«Փոփոխէն միանգամ ընդ միշտ պարտք կը հանարի Զեքի վանութեան ազդարարել որ եթէ այս նամակը կառավարութեան յանձնուի եւ եթէ մեր խեղճ ազգին դէմ հայածանքը, չարարանքը եւ խտուծութիւնները վերսկսուի, Զեքի վանութեանը պատասխանատու պիտի բռնենք առանց, եւ մահուան պատիժը պիտի գործադրուի։»

Օրմանեանը մօտէն ճանչցողներ Պոլսէն մեզի կը հաղորդեն թէ Օրմանեան իր ընդունած այս նամակը ոչ մէկուն չէ յանձնած, հնազանդելով Հնչակեան կուսակցութեան պատմէրին, Տառետեան փայան, ընդհանրապէս, փութացած է կառավարութեան յանձնել այդ նամակը, եւ — ճղճիմ բայց նշանակելի մանրամասնութեան — անմիջապէս ընդունած է Սուլթանէն իր եւ իր տղուն չլիճ արուած ամսականները ամենը մէկէն։

Le Journal de Genève, իր պարբեր Դի թուով Պոլսէն ուղղուած թիթիակցութիւն մը կը հրատարակէ, որուն մէջ թղթակիցը, անխմատ գտնելէ յետոյ Օրմանեանի զրկուած սպանաւ գործը, շատ հասկանալի կը նկատէ Տառետեանի ուղղուած սպանաւիքը։

«Ոչինչ աւելի անխնայ է, կը գրէ, քան այսպիսի նամակ մը զրկել Օրմանեան Սրբազանի պէս պատրիարքի մը որուն անձնութիւնը ինչպէս իր հովուած հօտը իր պատրիարքը բնորոշուցնէ ի վեր քանի քանի անգամ յայտնուած է ամենէն տագնապալից պարագաներուն մէջ եւ որ ուրիշ նպատակ չունի բայց եթէ հապտեցնել իրեն յանձնուած շահերը օսմանեան կառավարութեան շահերուն հետ, զժողովրդին գործը, զոր կատարած է եղական թաքթով մը(!)։ Բայց նմանօրինակ նամակ մը զրկուած է, շատ իրաւացի կերպով, Արթին փայա Տառետեանին, Արտաքին գործոց նախարարութեան պետական փոխ-քարտուղար եւ Հայոց քաղաքական ժողովոյ ատենապետ, զոր իր ազգակիցները իր նկատմամբ, եւ բոլորովին չեն տրտալիք, իրբեւ մտնելի մը, որ իր անձնական շահէն, որիցն նկատողութեան կ'առնէ եւ որուն ստրկական հաճոյակատարութիւնը հանրաժանութիւնը է։»

Այս ծանրակշիռ եւ Տառետեանի համար շատ վտանգաւոր տողերը Le Journal de Genèveի պէս լուրջ լրագրի մը մէջ, շատ շահեկան են, եւ շահեկան՝ անով մասնաւոր որ թղթակիցը ուղղակի Օրմանեանէն ներշնչուած ըլլալու հաստատանքով իրենց կ'ան։ Օրմանեան կը սկսի ուրեմն վրէժ գրուած իր «չար ոգիներն, այն անձնէն որուն խորհուրդները զինքը քարոյշապէս սպանեցնելն ազգին առջեւ։ Լոռոյիցի ալ կան թէ Օրմանեան այս բոլոր թղթացքը կը բռնէ իր կողմը ժողովրդականութիւնը վերսկսելն ձեռք ձգիլու եւ Սոյո կաթողիկոս ընտրուելու համար։ Ընդգծել է գրաւոր թէ ազգը պիտի ուզէ՝ փորձեալը կրկին փորձել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՐԵԿԱՑՈՒՄ ԵՐ

— 0 —

Ա. Զապանեան խնդրեց Ligue des droits de l'homme et du citoyen էն որ իր հովմանաւորութիւնը շնորհէ գրական եւ երաժշտական ցերեկայիցի մը որ պիտի տեղի ունենայ յունիս 9ի շաբաթ օրը, ի նպատակ Հայաստանի հազարաւոր որբերուն։ Զապանեան այս գաղափարը յղացած էր երկու տարի առաջ, եւ Լաւէի դեսպանախորհուրդին ատեն, ներկայացուցած էր զայն՝ ֆրանքո-հայկական ընկերութեան, բայց այդ միջոցին Ֆրանսա Տրէքլիսի խնդրոյն ամենէն տագնապալից փուլին մէջ գտնուելով՝ Պ. Լաւիս խորհուրդ տուած էր այդ գաղափարին իրաւորեմունք յետաձգել։ Այժմ, Ligue des droits de l'homme Երրորդ հաւանած է իր հովմանաւորութիւնը շնորհել այս հայկական ցերեկայիցին։ Պ. Բոնէլ հաճած է վստովել թատերոյնը ձիարար տրամադրութեան տակ դնել այդ ցերեկայիցին, եւ անմապէս անջակցիլ անոր կազմակերպութեանը։ Այս ցերեկայիցիով Զապանեան նպատակ ունի ոչ միայն քիչ մը ներթափանցեցնել հապտեցնել մեր որբերուն, այլ նաեւ այս ստիւիւ Հայոց քանապակեղծութեան եւ երաժշտութեան վրայ գաղափար մը տալ ֆրանսական հասարակութեան։ Բարեբաղ ամենէն նշանաւոր արուեստագէտները պիտի մասնակցեն այս ցերեկայիցին։ Մեր յառաջիկայ թուով պիտի հրատարակենք մանրամասնութիւններ։

ԱՋԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— 0 —

— Բէւ-Լաշէզի գերեզմանատան մէջ վերջէքս առիթ ունցնալ տեսնելու այն սիրուն դեմքը ինքանաբար զոր տիկին Թիւսիւզիան դնել տուած է իր ամուսնին մարմնոց վրայ եւ որ հայերէն ու ֆրանսերէն տառերով կը կրէ հանդուցեալին անունը. գերեզմանաբար զարդարուած է ծաղիկներով, որոնք միշտ կը նորուգուին այրիին խնամքներով։ — Ինչ որ պարզ կ'ին մը կ'ընէ իր ամուսնուն յիշատակին համար, ցատալի է մտածել որ ամբողջ Բարեգի Հայ գաղթականութիւնը դեռ չէ ըրած Բրիգոր Օտանեանի համար, որուն գերեզմանաբար չեոռ եւ է արձանադրութիւն չի կերել, եւ խոտերուն մէջ անհետած մոռցած է մնացած է։ Փոխանակ արհարարակներն հին նամակի յաճախ անխտ կտորուանքներ որոնք այդ առնիւ գրաւգէտ ազգայանքը ծծողալի կը գրաւեն, Պ. Չեքազ շատ աւելի լուրջ քան ըրած կ'ըլլար, — եւ պարտականութիւն մը կատարած, — եթէ այս անխտապիւր զիտողութիւնը գտնէ անգամ մը ներկայացուցած ըլլար միշտ հիմա։